



ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագրի փակման արարողությունը

2017թ. հուլիսի 7-ին Հայաստանը պաշտոնապես կփակի «Հայաստանի ազգային վիճակագրական համակարգի ամրապնդում – II փուլ» ԵՄ ԹՎԻՆԻՆԳ ծրագիրը:

Եվրոպական միության կողմից 1 000 000 մլն եվրո բյուջեով ֆինանսավորվող ծրագրի **նպատակն** էր աջակցել Հայաստանում պաշտոնական վիճակագրության արդիականացմանը՝ ներդնելով նոր և եվրոպական ստանդարտներին համահունչ մեթոդաբանություններ և ընդլայնելով պաշտոնական վիճակագրության տարածումը հանրության շրջանում: Ծրագիրը կենտրոնացած էր վեց թեմատիկ ոլորտների վրա. Վիճակագրության տարածում, ժողովրդագրական վիճակագրություն, աշխատաշուկայի վիճակագրություն, աղքատության վիճակագրություն, ինովացիայի վիճակագրություն և ջրի հաշիվներ:

Ծրագրի ամբողջ ընթացքում ուշադրության կենտրոնում է եղել առկա վարչական ռեգիստրների օգտագործումը՝ վիճակագրական տեղեկատվության արտադրման նպատակով:

ԹՎԻՆԻՆԳ ծրագիրն իրականացվել է Դանիայի վիճակագրության կողմից Ֆինլանդիայի վիճակագրության, Իտալիայի Իստատի և Լիտվայի վիճակագրության հետ համագործակցությամբ և Եվրոպական միության աջակցությամբ:

Ծրագիրն իրականացվում է սկսած 2015թ. օգոստոսից:
Փակման արարողությանը կներկայցվեն ծրագրի ամենակարևոր արդյունքները:

Ամսաթիվը և ժամը.
Վայրը.

2017թ. հուլիսի 7, ժամը՝ 09:30-ին
Էրեբունի պլազա բիզնես կենտրոն («Էրեբունի» կոնֆերանսների դահլիճ),
Վ. Սարգսյան, 26/1

Լրացուցիչ տեղեկությունների համար՝

պրն Պիտեր Բոնստեդ Անան Հանսեն, ԹՎԻՆԻՆԳ մշտական խորհրդատու, Դանիայի վիճակագրություն, pah@dst.dk
տկն Անահիտ Սաֆյան, ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ, info@armstat.am



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից
<http://eeas.europa.eu/delegations/armenia>

Ծրագիրն իրականացվում է Դանիայի վիճակագրության կողմից Ֆինլանդիայի վիճակագրության, Իտալիայի Իստատի և Լիտվայի վիճակագրության հետ համագործակցությամբ և Եվրոպական միության աջակցությամբ Ծրագրի շահառուն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունն է (ՀՀ ԱՎՄ):

Եվրոպական միությունը բաղկացած է 28 անդամ երկրներից, որոնք որոշել են աստիճանաբար միավորել իրենց փորձառությունը, ռեսուրսները և ճակատագրերը: 50 տարվա ընդլայնման ընթացքում նրանք միասին կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատական ազատությունները: